

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՄԱՆ-ԱՇԱԿՈՒԹՅԱՑԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արտագնացների աշխատանքային գործունեությունը՝ տարվա որոշ շրջանը սեփական, իսկ մյուսը՝ ալլենիկ միջավայրում, դասնում է այն կարևոր հիմքը, որի պայմաններում ծևավորվում են նրանց մշակույթի ու կենցաղի ընդհանուր և առանձնահատուկ գժերը: Եթե գյուղական բնակչության մոտ ամուր ազգակցական կապերի առկայությունը պայմանավորում է վարքի ավանդական մողելների վերարտադրությունը, ապա նոր՝ սոցիալ-տնտեսական և մշակութային միջավայրում արտագնացների շրջանում դրանք իրենց տեղը գիշում են «արտաքին» կապերին և այլ երնոմշակութային տեղեկատվության ադրյուներին: Սա հանգեցնում է նրան, որ նախկին ԽՍՀԱ-ի տարբեր ազգային շրջաններում ցըված արտագնա խմբերը ոչ միայն արտահանում են իրենց ժողովրդական մշակութի որոշ տարրեր, նոր միջավայրին հաղորդում լրացուցիչ եթնիկական նրբերանգներ, այլև սեփական մշակութային-կենցաղային համալիր են ներմուծում նոր գժեր ու քաղաքային չափանիշներ. «Արտագնացները գյուղական միջավայր են ներմուծում քաղաքային այն կառուցվածքները, որոնք որոշում էին նրանց կյանքը քաղաքում»¹: Կապված վերը նշվածի հետ՝ առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնց լուծումը հնարավորություն կտա բացահայտելու արտագնացության մշակութային-կենցաղային րնութագրերը և ունեցած սոցիալական հետևանքները: Ասսավորապես,

ստորև քննարկման են արժանի երեք խումբ հարցեր:

Առաջին խումբը վերաբերում է այլէթնիկ միջավայրում արտագնացների գործունեությանը, նրանց հարմարվողականությանը, տեղի բնակչության հետ շփումներին և այլն:

Երկրորդ խումբը վերաբերում է արտագնացի երնուացիալ կերպարին՝ նրա եթնիկ վարքագիրի փոփոխմանը և նորի ծեռքբերմանը, արժեքային կողմնորոշմանը, երկեգովության և մշակույթի հիմնախնդիրներին: Կարևոր է նաև պարզաբանել, թե այլէթնիկ միջավայրի ագդեցության հետևանքով արտագնացների ավանդական մշակույթի և կենցաղի որ տարրերն են փոփոխվում, կամ պահպանվում, ի՞նչ ուղղությամբ են ընթանում ավանդականի և նորի ինտեգրման գործընթացները, դրանք ինչպես են նպաստում տարբեր եթնիկ խմբերի մերձեցմանը և համախմբմանը:

Երրորդ խումբը վերաբերում է արտագնացության սոցիալ-ժողովրդագրական հետևանքներին. ընտանիքից արտագնացի ժամանակավոր րացակայությանը, ամուսնալուծություններին և ընտանիքի լրմանը, ընտանիքում ստեղծված հոգերանական և րարոյական մթնոլորտին, բնակչության սեռատարիքային կազմի հարաբերակցության խախտմանը, մշտական միգրացիայի ծևավերմանը:

Առավել ընդհանուր ձևով առաջին երկու խումբ հարցերն ընդգրկում են մշակութային-կենցաղային մի քանի ոլորտներ. ազգամիջյան հարաբերություններ, լեզվական վարք, պրոֆեսիոնալ մշակույթի սպառում (ազգային և օտար երաժշտության օգտագործում), սոցիոնորմատիվ մշակույթ (հարսանեկան արարողություններ, երեխաների ամուսնության

¹ Гинзбург А.И., О влиянии некоторых национальных традиций на миграцию из села в город (На материале Молдавской и Узбекской ССР), СЭ, №4, 1980, с. 108.

համար ծնողների համաձայնություն, ժողովուական տոներ և այլն), նյութական մշակույթ (բնակավայր, բնակարան, կերակուր և այլն): Նշված ոլորտներում արտագնացների շրջանում առաջ եկած նոր գծերը ցայտուն են արտահայտվում, երբ այն համեմատում ենք գյուղական ոչ արտագնա բնակչության հետ անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների հետ:

Նետազոտություններից պարզվում է, որ այլ բազմեթիվ միջավայրում արտագնացների և տեղի բնակչության միջև կատարվում են ակտիվ և երկարաժամկետ շփումներ: Արյուսակ 39-ից կարող ենք դատել, որ այլեթիվ միջավայրում արտագնացների բոլոր տարիքային խմբերը շփում են տեղի բնակչության հետ: Դրանք կազմել են համապատասխանարար 97%, 92%, 87%:

Աղյուսակ 39

Արտագնացների շիման արդյունավետությունը՝ ըստ տարիքային կազմի (%-ով)

Տարիքային կազմը	Անդ	Շփումների արդյունավետությունը					Ընդամենը
		2-3 օրը մեկ	Սիան շաբաթ	Կիրակի օրերին	Հազարին	Են շփում	
18-29	33	32	32	2	1	100	
30-49	30	32	30	5	3	100	
50 և ուշադր	28	31	28	8	5	100	
Ընդամենը	30.3	31.7	30	5	3	100	

Ըստ ինտենսիվության՝ արտագնացների 30.3%-ը միջին հաշվով ամեն օր շփվել է այլեթիվ ընդհանրության ներկայացուցիչների հետ, 31.7%-ը՝ 2-3 օրը մեկ, իսկ 30%-ը՝ շաբաթ և կիրակի օրերին: Նազվադեալ շփումների թիվը կազմել է 5%, իսկ չշփողներինը՝ 3%: Շփումների արդյունավետության վոա իրենց ազդեցությունն են թողել մի շաբաթ գործոններ: Դրանցից **առաջինը** արտագնացի տարիքային գործոնն էր: Ըստ տարիքի աճի՝ այն ցուցարերել է նվազման միտում: Օրինակ՝ 18-29 տարեկանները, որոնք սոցիալա-

պես առավել շարժունակ են և հեշտությամբ են հարմազվում նոր միջավայրին, համեմատած մյուսների հետ, շփում են առավել հնատենսիվորեն. այսպես, ամենօրյա շփողներ՝ 33%, հազվադեալ շփողներ՝ 2%, չշփողներ՝ 1%:

Աղյուսակ 40 Տեղի բնակչության հետ արտագնացների շիման ինտենսիվությունը՝ ըստ արտագնացության տևողության (%-ով)

Արտագնացության տևողությունը	Շփումների արդյունավետությունը					Ընդամենը
	Անդ	2-3 օրը մեկ	Սիան շաբաթ	Կիրակի օրերին	Հազարին	
1-3	25	25	19	28	3	100
3-6	26	22	23	24	5	100
6-10	29	24	31	13	3	100
10-ից ուշադր	35	30	30	3	2	100
Ընդամենը	28.7	25.2	25.7	17	3.4	100

Մինչդեռ միջին և ավագ տարիքային խմբերում որոշ չափով կրճատվել են ամենօրյա շփումները (30% և 28%), և ընդհակառակը՝ ավելացել է հազվադեալ շփողների (5% և 8%) և չշփողների (3% և 5%) քանակը: Անշուշտ, շփումների նման սահմանափակման վոա շոշափելի ազդեցություն են թողնում նաև նրանցում արդեն ձևավորված ավանդական վարքի նորմերը:

Երկրորդ՝ միևնույն բնակավայրում երկար տարիներ նրանց աշխատանքային գործունեությունը, որոր նպաստում էր շիման ոլորտների ընդլայնմանը և հետևարար նրա ինտենսիվության բարձրացմանը: Որքան մեծ է արտագնացության տեսողությունը, այնքան ավելանում է շիման ինտենսիվության ավելացումը:

Շփումների ինտենսիվության վոա ազդում են նաև նրանց լեզվական իմացությունը, սոցիալ-մասնագիտական պատրաստականությունը, կրթական մակարդակը, ինչպես նաև արտագնացների աշխատատեղի մոտիկությունը բնակավայրին և դրա տիպը:

Նոր սոցիալ-մշակութային միջավայրում նման շփումները կարևոր աղբյուր են վարքի նոր ծեսի և նորմերի, սոցիալական կողմնորոշման ու գործունեության կենսածկի վերաբերյալ տեղեկատվության ծեռքբերման համար: Սա մի կողմից նպաստում է այլէթնիկ միջավայրում արտագնացի կանոնավոր գործունեության և զարգացման գործընթացին, մյուս կողմից՝ նրա սոցիալ-հոգերանական և մշակութային հարմարվողականությանը: Արտագնացների հարմարվողականությունը ունի որոշակի առանձնահատկություններ¹: Այն առաջին հերթին կապված է արտագնացության սեզոնային բնույթի և այն սոցիալական միկրոմիջավայրի հետ, որ արտագնացները ծեսավորում էին իրենց շուրջը. «Այն չափով, որ չափով որ անհատը իր շուրջը ծևավորում է սոցիալական միկրոմիջավայր՝ համպատախան իր մշակութային պահանջներին և դիրքորոշումներին, միկրոմիջավայրը իր հերթին ագրում է անհատի մշակութային, մասնագիտական կողմնորոշումների վոյա»²:

Տարրեր էթնիկական խմբերի միջև ակտիվ մշակութային տարրերի յուրացման գործընթացը ոչ միայն կախված է շփումների ինտենսիվությունից, այլև բնույթից:

«Դատկապես այլէթնիկ մշակութային տարրերի ինտենսիվ յուրացումը, մեր կարծիքով, մեծ չափով կախված է միջէթնիկ հարարերությունների բնույթից»:³ Այն իրականացվում է համարակական կյանքի տարրեր բնագավառներում՝ ինչպես աշխատանքային ոլորտում, այնպես էլ դրանից դուրս: Շփումները կրում են ոչ միայն գործնական, այլև ընկերական բնույթ: Ծինարարության բնագավառում գործնական շփումները (30.3%) մի կողմից նպաստում էին ազգային մի շարք արհեստների արտահանմանը, իմտությունների փոխանակմանը և նորի ծեռքբերմանը, մյուս

կողմից՝ կառուցվող շենքերում, բնակարանների ներքին և արտաքին հարդարանքներում երբեմն նաև ազգային տարրերի ներդրմանը (տե՛ս աղ. 41):

Աղյուսակ 41
Արտագնացների շփումների բնույթը տեղի բնակչության հետ՝ ըստ տարիքային կազմի (%-ով)

Արտագնացների տարիքային կազմը	Գործնական շուրջական դրական դրամականություն	Արդյունաբերական դրամականություն	Երանություն	Արդյունաբերական դրամականություն	Արդյունաբերական դրամականություն	Ընդհանուր
18-29	25	45	21	6	3	100
30-49	27	50	17	2	4	100
50 և ուշադր	39	23	33	2	3	100
Ընդհանուր	30.3	39.3	23.7	3.4	3.3	100

Եթոնմշակութային տեղեկատվության փոխանցման կարևորագույն աղբյուր են ընկերական շփումները (39.3%), որոնք ստեղծվում էին ընդհանուր հետաքրքրասիրության և անհատական հոգերանական գերի հիման վրա: Տարրեր ազգությունների ներկայացուցիչների միջև ընկերական կապերը նպաստում էին բավարարելու անհատի հոգենոր պահանջնունքները: Նման շփումներն ամրապնդում են ընկերության միջէթնիկ ինտեգրացման գործընթացները,⁴ նպաստում նրանց համակողմանի գաղգացմանը: Նման պայմաններում արտագնացները ոչ միայն անմիջականորեն առնչվում են օտար ազգային ավանդականական մշակույթի բաղադրամասերին, այլև տեղի է ունենում արժեքների, պատկերացումների, գաղափարների փոխանակում: Լ. Բուևան և Վ. Ալեքսեևան, անդրադառնալով այդ խնդրին, նշում էին. «Ծփումները ոչ միայն ծնում են նոր գիտելիքներ, առաջ բերում նոր պահանջնունքներ, այլև ինտենսիվորեն տեղի են ունենում «գիտելիքների փոխանակում», տարրեր մշակույթների միջև ակտիվ փոխներգործություն, ինքնատիպ «սոցիալական և մշա-

¹ Там же, с. 108.

² Хайдина М.Э., К вопросу о структуре межличностного общения мигрантов в иноэтнической среде (По материалам опроса ленинградских татар), СЭ, М., №4, 1980, с. 99.

³ Дробижева Л.М., Сусоклов А.А., Межэтнические отношения и этнокультурные процессы (По материалам этносоциологических исследований в СССР), СЭ, №3, М., 1981, с. 13.

⁴ Бромлей Ю.В., Современные проблемы этнографии, М., 1981, с. 77.

կութային արժեքների» ընտրություն»¹: Գործնական և ընկերական շփումները հաճախ հանդես են գալիս ոչ միայն առանձին, այլև զուգահեռաբար, քանի որ աշխատանքային կոլեկտիվի որոշ անդամների միջև ձևավորվում են ընկերական հարաբերություններ:

Արտագնացների շփման իմտենսիվությունը և բնույթը անխզելիորեն կապված է ին նաև նրանց ազատ ժամանցի օգտագործման ձևերի հետ²:

Արտագնացների որոշ մասը՝ 27%-ը, ազատ ժամանակ գերադասում է հանգստանալ՝ կորցրած ֆիզիկական ուժերը վերականգնելու և կենցաղով գրադարձու համար: Այն բարձր տոկոս էր կազմում երկրորդ և երրորդ տարիքային արտագնացների իմբում՝ համապատասխանաբար 27% և 35%: Անացած մասն ակտիվորեն էր անցկացնում հնարավոր ազատ ժամանակը: Նրանք մասնակցում էին տեղում կագմակերպվող միշարք մշակութային միջոցառումների՝ հաճախում էին կինո՝ 30.3%, պարահրապարակ՝ 33.3%, դիտում էին հեռուստացույց, ունկնդրում ռադիո՝ 10.4%, ժանոթանում տվյալ ընակավայրի պատճական անցյալին և ներկայի նվաճումներին: Թվարկված բոլոր միջոցառումներին ակտիվորեն են մասնակցել 18-29 տարեկան արտագնացները (տե՛ս աղ. 42):

Տեղի բնակչության հետ նման երկարատև և ակտիվ շփումները կարևոր իիմք են էթնիկական կարծրատիպերի ձևավորման և փոփոխության համար: Վարքի էթնիկական կարծրատիպերը, որոնք Գ. Աստրովյանովան ընութագրում է որպես «կենսագործումներության կայուն, կանոնավոր կրկնվող ձևեր (կամ կենսակերպի տարրեր), որոնք չնայած ունեն

հայտնի սոցիալական նշանակություն, սակայն չեն կրում «իրավունակայինի» բնույթը և չեն գիտակցվում այդ վարքը կրողների կողմից որպես արարժներ»,³ շատ կողմերով կապված են ազգային կենցաղի հետ և համարվում են անհատի էթնոհոգեբանական որոշակի դրսերում: Որպես ազգային դիրքորոշման առանձնահատուկ ձև՝ այն հարցերիկում վավերացված է հետևյալ հարցերով. «Զեր կարծիքով, ի՞նչ դրական և բացասական բնավորության գծեր են բնորոշ այն ազգությանը, որի մեջ Շուք աշխատում էիք», «Բնավորության ի՞նչ դրական և բացասական բնավորության գծեր կտայիք Զեր ազգությանը պատկանող մարդկանց»:

**Աղյուսակ 42
Արտագնա աշխատանքի վայրում ազատ ժամանակի անցկացման ձևերը (%-ով)**

Տարիքային կազմո	Մյուս մկրաց	Այսի մկրացիցոց	Կը դասվողը	Իրավունակություն	Կը դաստի	Արժեքի մասնակիություն	Սովորություն
18-29	19	37	41	2	1	100	
30-49	2	29	33	9	2	100	
50 և բարձր	35	25	17	20	5	100	
Ընդամենը	27	30.3	30.3	10.4	2	100	

Հարցադրումը նպատակ ուներ րացահայտելու ինչպես այլքնիկ հանրությանը (հետերոկարծրատիպեր), այնպես էլ իր ազգայինին (ավտոկարծրատիպեր) պատկանող մարդկանց բնավորության առանձնահատուկ գծերի բնութագրությունը և համադրելու դրանք: Սոցիալ-հոգեբանական տեսանկյունից հարցի այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս սեգոնային միգրացիայի գարգացման հետագա հեռանկարների վերաբերյալ կատարելու որոշակի կանխատեսումներ և գործնական եզրահանգումներ: Նախ՝ մարդկանց դրական դիրքորոշումները դեպի ազգամիջյան շփումներ, ինչպես նշում է Լ. Դրորի-Ժեան, կարող է «նպաստել տեղաբնիկ ագ-

¹ Буева Л.П., Алексеева В.Г., Общение как фактор развития личности; СИ, № 2 М., 1982, с. 40.

² Ազատ ժամանակը, որը կազմում է կենցաղի բարձրացուցիչ մասերից մեկը, ուներ «հարաբերական նշանակություն», քանի որ աշխատանքային որը տևում էր շաբաթական: Այն, փաստորեն, 1,8 անգամ գերազանցում էր սովորականին: Օրինակ, եթե սովորական աշխատողների համար գոյություն ունի 41-ժամյա աշխատանքային շաբաթ և երկու հանգստյան օր, ապա արտագնացների աշխատանքային շաբաթը միջին եաշվով տևում էր 72 ժամ, շատ խմբերում՝ ավելացրած նաև համգայում օրերո:

³ Старовойтова Г.В., Этнические особенности поведения и внешности в восприятии граждан,- В кн. «Этнические стереотипы поведения», Л., 1985, с. 22.

գերի ներկայացուցիչների միզրացիային՝ աշխատուժի ավելցուկ ունեցող շրջաններից (օրինակ՝ Կովկաս կամ Միջին Ասիա) դեպի այսպիսի շրջաններ, որտեղ գգացվում է աշխատուժի պակաս»¹: Բացի դրանից, իսրարդային րազմազգ պետությունում այդ գործընթացը սերտորեն առնչվում էր մարդկային հարաբերությունների ներդաշնակեցմանը և կարգավորման գործընթացներին, ինչպես նաև նպատակ ուներ բարձրացնելու նրանց սոցիալ-հոգեբանական ինքնազգացողությունը²: Ընդհակառակը, բացասական դիրքորոշումները դեպի ազգամիջյան շփումներ կարող են կասեցնել այդ հարաբերությունները և նույնիսկ «վերածնել էրնիկական ավանդույթների որոշ վերացած տարրեր, որոնք այնուհետև սկսում են հանդիսանալ որպես էրնիկական գիտակցության մեջ բացասական երևոյթների «բյուրեղացման» կետեր»³:

Աղյուսակ 43

Գյուղական բնակչության և այդ քվում սեզոնային միզրանուների շրջանում կարծրատիպերը

Կարծրատիպեր	Դրական	Բացասական	Ընդամենը
1. Այլերնիկ հանրույթին տրված բնութագրերը ամրող գյուղական բնակչության շրջանում	73	27	100
Սեզոնային միզրանուներ	60	40	100
2. Ինքնարնութագրերը ամրող գյուղական բնակչության շրջանում	85	15	100
Սեզոնային միզրանուներ	58	42	100

Ինչպես արտագնացները, այնպես էլ գյուղական ողջ բնակչությունը սեփական և այլերնիկ հանրության (ռուսներ) պատկանող

¹ Дробижева Л.М., Межличностные национальные отношения: Основные черты и особенности, Социологические исследования, М., 1982, №4, с. 34.

² Там же, с. 35.

³ Дробижева Л.М., Сусоколов А.А., Межэтнические отношения и этнокультурные процессы (По материалам этносоциологических исследований в СССР), СЭ, №3, М., 1981, с. 15.

մարդկանց վերաբերյալ բառերի և բառակապակցությունների ծևով թվարկել են բազմաթիվ դրական և բացասական կարծրատիպեր: Գյուղական րնակչության շրջանում այլերնիկ հանրությանը տրվող ռնութագրերը հիմնականում ծևավորվում են գանգվածային տեղեկատվական միջոցների ազդեցության տակ և հպատական շփումների հիման վոա:

Այդ իսկ պատճառով նրանց մոտ այդ կարծրատիպերը կրում են գգացական բնույթ և գուրք են առավել րովանդակալից լինելուց: Կարծրատիպերի որոշ մասն էլ ծևավորվում էր մարդկանց մեծ իմբերի գործունեության մասին պատկերացումների հիման վոա: Այստեղ կարևոր դեր էր կատարում պատմական գործոնը: Օրինակ՝ «հայրենասիրություն», «խիգախություն», «հաստատակամություն» և այլ կարծրատիպերը բնութագրական են ողջ ռուս ժողովողի համար: Դրանք պատմական խոշոր իրադարձությունների, հատկապես Հայընական մեծ պատերազմի ընթացքում ցուցաբերած հերոսական գործողությունների գգացական ընկալման հետևանք են⁵: Մինչդեռ արտագնացների շրջանում գերակշռում են կոնկրետ դիտարկումները: Օրինակ՝ արտագնացների՝ ռուսներին վերագրած դրական րնութագրերում՝ «աշխատասիրություն», հյուրասիրություն», «անկեղծություն», «ազնվություն», «ընկերասիրություն», «բարեհիմնություն» և այլն, որոնք շատ են հանդիպում հարցաթերթիկում, ստեղծվում են անմիջական շփումների հիման վոա:

Երկար ժամանակ գտնվելով այլերնիկ մի ջավայրում և մոտիկից ծանոթ լինելով տեղի մշակութային-կենցաղային հաստատությունների աշխատանքին, ինչպես նաև այլ սոցիալական հիմնարկների գործունեությանը՝

⁴ Հայկական ԽՍՀ-ն ասք էր ընկնում բնակչության քարձը մոնուերնիկ ազգային կազմով: 1979թ. համայնտերնական մարդահամարի տվյալներով՝ հայերը կազմել են 89,7%, աղքատացները՝ 5,5%, ռուսներ՝ 2,3%, քրդեր՝ 1,7%, ասորիներ՝ 0,2%, հուները՝ 0,2% և այլն: Աս հիմք է հանրապետության ներսում ազգամիջյան ակտիվ շփումների համար: Տե՛ս Կառավարության 1979 թվականի ազգային բնակչության ռեզուլտատները՝ Հայաստանի համար:

⁵ Օգանջանյան Պ.Ը., Նекоторые черты национальной психологии. - В кн. Население Еревана (Этносоциологические исследования), Ер., 1986, с. 204.

շատ հաճախ որպես արտագնացները ընկալում և մեկնարանում են որպես տվյալ էթնոսի դրական էթնիկական բնութագիր: Օրինակ՝ տեղի բնակչության շրջանում սոցիալական արդարության չափանիշների պահպանումը խթանել է «արդարության», իսկ մշակութային-կենցաղային հաստատությունների որական աշխատանքը «կազմակերպվածության» կարծրատիպերի ձևավորմանը:

Արտագնացների շրջանում այլէթնիկ հանրույթի նկատմամբ բացասական բնութագրերը առաջացել են տարբեր կոնֆլիկտային իրադրությունների ընթացքում, որոնք մեծ մասամբ կապված են աշխատանքային գործունեության՝ հատկապես աշխատանքային պայմանագրով նախատեսված դրամական վճարումների չափերի խախտման հետ: Բացասական գնահատականների քանակը հաճախ բարձր էր այն արտագնացների մոտ, ովքեր բավարարված չէին աշխատանքային պայմաններից և ստացած աշխատավարձից: Նման իրադրությունում արտագնացը, այդ երևոյթները չընկալելով ամբողջությամբ, վերագրում էր այն էթնիկ հանրույթին, որի մեջ իրենք աշխատում էին: Այդ կապակցությամբ L. Դրոբիշևան նշում է. «Երր մարդիկ րազմագգ միջավայրում մատնվում են անհաջողության, որը կապված է կյանքի ոչ բարենպաստ հանգամանքների հետ, նրանք հակված են այդ անբավարարվածությունը տեղափոխել ազգային հողի վոա: Այդ տեղափոխության մեխանիզմը գրականության մեջ բնութագրվում է որպես «քավության նոխագ» դառնալու իրավունք»¹:

Այս հանգամանքով կարելի է բացատրել արտագնացների նշած «ամսկգրունքայնություն», «խարդախություն» և նման կարծրատիպերը: Բացասական գնահատականները հաճախ ձևավորվում են այլէթնիկ հանրության ներկայացուցիչների վարքը ազգային-ավանդական պրիզմայով գնահատելու փաստով: Ամիշանձային շիման գործընթացում ազգային-ավանդական գործոնները դառնում են

ազգայինի և օտարի սեփական ճամաչողության համեմատության կարևորագույն չափանիշ: Այս տեսանկյունից արտագնացները տղամարդկանց և կանանց համար նշել են այնպիսի ռացասական բնութագըեր, որոնք համեմատվել են սեփական ազգային չափանիշների հետ և առաջին էթրիդի վերաբերում են ներընտանեկան կյանքի էթնիկ առանձնահատկություններին: Օրինակ՝ տղամարդկանց համար եարցաթերթիկում շատ են հանդիպում այնպիսի կարծրատիպերի, ինչպիսիք են՝ «ենթարկվում են կոնզը», «կատարում են կանանց գործեր», «հեշտությամբ հեռանում են ծնողների մոտից», «հարբեցողներ են» և այլն, իսկ կանանց համար՝ «ազատամիտ են», «հաճախում են պարակապարակ», «հեշտությամբ են հեռանում ամուսիններից» և այլն:

Այլէթնիկ միջավայրում արտագնացների ժամանակավոր գործունեությունը կարևոր պայման էր ազգային կարծրատիպերի փոփոխության և դրա ամբողջական բնութագրման համար: Այն ընդլայնում էր նրանց աղմեքային կողմնորոշման ընտրության ուղղությունը, նպաստում աշխարհայացքի ձևավորմանը և ազգային նախապաշարմունքների մնացուկների վնրացմանը²: Ի տարրերություն գյուղական բնակչության՝ արտագնացներին հատուկ է քննադատական վերաբերմունքը սեփական միջավայրի նկատմամբ, և էթնիկական ինքնազնահատման փաստը դառնում էր առավել հավաստի ու բովանդակալից: Այն էթնիկ կարծրատիպերը, որոնք կապված են ավանդական մշակութային-կենցաղային բնութագրերի հետ, արտագնացների շրջանում միջանձային շփումների ժամանակ ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Նրանց կողմից սեփական ընդհանրության ներկայացուցիչներին տրված դրական և բացասական կարծրատիպերը ավելի շատ պատճական բնույթ ունեն, քան արդիական: Էթնոսոցիոլոգիական հետազոտությունից պարզվում է, որ գյուղական կյանքի, նրա մշակութային-կենցաղային

¹ Дробижева Л.М., Об изучении социально-психологических аспектов национальных отношений (Некоторые вопросы методологии), СЭ, N4, М., 1974, с. 22.

² Арутюнян Ю.В., О некоторых тенденциях в изменении культурного облика нации (По материалам этносоциологического исследования в Грузии), N4, СЭ, 1973, с. 12.

պայմանների վերաբերյալ բացասական կարծրատիպերը հատկապես գերակշռում են նրանցում, ովքեր ցանկանում են տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել այն վայրերում, որտեղ նրանք երկար տարիներ մեկնել են արտազնա աշխատանքի:

Բացի ազգային կարծրատիպերի փոփոխություններց, միջանձային ակտիվ շփումները կարևոր դեր երն կատարում նաև լեզվական իմացության և տարածման գործում: Որպես հաղորդակցման կարևորագույն միջոց՝ լեզվական գործոնը մի կողմից ազդում էր արտազնացների կյանքի կենսաձևի վիա՝ նպաստելով նրա մշակութային-կենցաղային գծերի փոփոխությանը, մյուս կողմից՝ ազգային և այլերնիկ մշակույթի յուրացմանը: Այս տեսանկյունից այլերնիկ միջավայրը արտազնացի համար կարևոր պայման էր ռուսաց լեզվի իմացության գործում: Ուստաց լեզվի օգտագործման անհրաժեշտությունը ծագում էր հասարակական կյանքի ամենատարեր բնագավառներում՝ ինչպես արտադրության, այնպես էլ դրանից դուրս:

Ինչպես վկայում են աղյուսակ 44-ի տվյալները, արտազնա աշխատանքի վայրում նրանք տեղի բնակչության հետ հաղորդակցվել են ոռւսերենով, իսկ աշխատանքային կոլեկտիվիմ՝ հայերենով և ոռւսերենով:

Unacademy 44

**Արագնա աշխատանքի վայրում հայերենի և
ռուսերենի օգտագործման հարաբերակցությունը
(%-%)**

Աշխատավայր	Նկատման մեջ գործող պահանջման առաջնային դաշտեր	Համարակալ առաջնային պահանջման առաջնային դաշտեր	Համարակալ առաջնային պահանջման առաջնային դաշտեր	Համարակալ առաջնային պահանջման առաջնային դաշտեր	Համարակալ առաջնային պահանջման առաջնային դաշտեր
18-29	7	16	66	11	100
30-49	7	7	71	15	100
50 և բարձր	7	4	60	29	100
Ընդունակություն	7	9	65.7	18.3	100

Վերջինս արտագնացների խմբերում կազմում էր 65.7%: Ռուսաց լեզվի հմացությունը բարձր տոկոս էր կազմում րոլոր տարիքային խմբերում: «Եթե դուք գիտեք ռուսերեն, ապա որտե՞ղ եք սովորել» հարցին արտագնաց-

Աերը դպրոցական կրթության և բանակի ծառայության հետ նշել են նաև արտագնա աշխատանքի վայրի զորժութեանությունը: Դրան նպաստում էր նաև արտագնացության մեկնելու տարիները:

Մանրամասն հարցումներից պարզվիւմ է, որ նրանք, որոնք երկար տարիներ գրաղվել են արտազնացությամբ, ազատորեն տիրապետում երն ոուսաց լեզվին: Այսպիսով, երկլեզվիթյունը դառնում էր արտազնացության բնութագրից կողմերից մեկը: Ըստ Մ. Գուրովյան՝ լեզվական գործունեությունը կյանքի տարբեր իրավիճակներում անհատի կողմից երկու լեզուների օգտագործումն է, որը արտացոլում է մարդու ոչ միայն գործնական պահանջմունքը երկրորդ լեզվի նկատմամբ, այլև ընդգրկում է դրա նկատմամբ վերաբերմունքը¹: Արտագնացների շրջանում կարևոր էր նաև երկրորդ լեզվի իմացության աստիճանի և կիրառման հարցի քննարկումը: Ոուսաց լեզվի իմացությունը հիմնականում սահմանափակվում էր րանավիր խոսակցականով, որը հաճախ ագդում էր նաև նրանց լեզվական կողմնորոշման վիա: Օրինակ, եթե ամրող գյուղական բնակչության միայն 17%-ն է ոուսաց լեզուն համարել որպես իր երեխաների ցանկալի լեզվական ուսուցում, ապա արտազնացների՝ 14%-ը: Այդ են ցույց տալիս այսուսակ 45-ի տվյալները: Լեզվական կողմնորոշման բնագավառում արտագնացների նման վարքագիծը բացատրվում է այն հանգամանքով, որ նրանք ցանկանում երն իրենց երեխաներին հետագայում տալ բարձրագույն կրթության Դայաստանի սահմաններից դուրս՝ հատկապես արտազնա աշխատանքի վայրում, որտեղ նրանք երկար տարիներ աշխատում են: Ոուսաց լեզվի իմացության խորացման համար ամառային արձակուրդի օրերին իրենց ծնողների հետ արտագնացության երն մեկնում նաև րարձր դասարաններում սովորող երեխաները: Գեղար-

¹ Губогло М.Н., Знание и употребление второго языка при двуязычии (По материалам этносоциологических экспедиций).- В кн. Тезисы докладов на сессии, посвященной итогам полевых этнографических и антропологических исследований в 1974-1975гг., Душанбе, 1976, с.62.

քունիքի մարզի Սարուխան, Շիրակի մարզի Փանիկ, Լոռու մարզի Սարչաված գյուղերի դպրոցների տնօրենների հետ անցկացված հարցումներից պարզվում է, որ նման երեխաները, համեմատած մյուսների հետ, ցուցաբերում են ոուսաց լեզվո բարձր առաջադիմություն:

Աղյուսակ 45
Հարցվողների վերաբերմունքը դպրոցական ուսուցման նեատումամբ (%-ով)

Տարիքային կազմը	Դաշտերեն		Ոռուսերեն		Դաշտերեն և ռուսերեն		Ընդամենը	
	Մասնակիություն դաշտերեն	Մասնակիություն սակագոյական	Մասնակիություն ռուսերեն	Մասնակիություն սակագոյական	Մասնակիություն ռուսերեն	Մասնակիություն դաշտերեն	Մասնակիություն սակագոյական	Մասնակիություն ռուսերեն
18-29	67	59	14	12	19	29	100	00
30-49	63	64	23	15	14	21	100	00
50 և ավելի	66	50	14	15	20	35	100	00
Ընդամենը	65.3	57.7	17	14	17.7	28.3	100	00

Այս ճանապարհով տարրեր վերոհիշյալ տարիների ընթացքում Ռուսաստանի բարձրագույն ուսումնական համատառություններ է ընդունվել և ավարտել վերը նշված երեք գյուղերից մոտավորապես 45 հոգի: Արտագնացները ոուսաց լեզվով քիչ էին հարողակացվում ընտանիքում: Ռուսերենով հարողակացվողները այն ընտանիքներն էին, որոնք երկար տարիներ ընտանիքի գլխավորի հետ գտնվել են արտագնա աշխատանքի վայրում, կամ նրանք, որոնց ընտանիքները կազմվել են ազգամիջյան խառնամուսնությունների հոդի վոա:

Ազգամիջյան խառնամուսնությունները մեծ տարածում ունեին արտագնացների շրջանում: Դես թվաքանակի վոա իը ազդեցությունն էի թողնում ազգային գործոնը: Գյուղական բնակչության ավագ սերունդն ընտանիքում և կենցադում ավանդական գծերի պահպանման, ինչպես նաև ազգային սովորությունների, լեզվական և կրոնական տարրերությունների պատճառով նախապատվությունը տալիս էի մոնութնիկ ամուսնություններին: Նման իրավիճակում արտագնացները

չեն կարող անտեսել ծնողների կարծիքը: Անդրադառնալով այդ հարցին՝ Ա. Կոգանը նշում է. «Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև տարեցների և երիտասարդների փոխհարաբերությունների ավանդական համակարգը: Այն մշակույթներում, որտեղ այդ հարաբերությունները կրում էին ավտորիտար դրույթ, երիտասարդները ամուսնության ժամանակ և շատ հաճախ հաշվի են նստում ծնողների (պապերի) ցանկության էթնիկ կողմնորոշումների հետ»¹:

Բայց արտագնացության ընթացքում վերը նշված շփումները, դրական ազգամիջյան դիրքորոշումները, արժեքային կողմնորոշման փոփոխությունները ազդում էին արտագնացների ավանդական վարքագիր վոա՝ առաջ րերելով որոշակի փոփոխություններ նրանց պատկերացումներում:

Աղյուսակ 46
Անունության հարցում ծնողների համաձայնությունը (%-ով)

Արտագնացների տարիքային կազմը	Գյուղական բնակչությունը	Արտագնացներ			Մշյակություն
		Ակտուալ	ՀՀ պատմական	Երանեական	
18-29	Գյուղական բնակչությունը	58	26	16	100
	Արտագնացներ	52	39	9	100
30-49	Գյուղական բնակչությունը	73	17	10	100
	Արտագնացներ	52	25	23	100
50 և բարձր	Գյուղական բնակչությունը	76	16	8	100
	Արտագնացներ	56	10	34	100
Ընդամենը	Գյուղական բնակչությունը	69	19.7	11.3	100
	Արտագնացներ	53.3	24.7	22	100

«Պարտադի՞ւ է արդյոք ամուսնանալու համար ծնողների համաձայնությունը ստանալ» հարցին, գյուղական բնակչության հետ համեմատած (20%), արտագնացների 25%-ը պատասխանել է՝ թերևս պարտադիր չեն:

Ինչպես գյուղական բնակչություն (69%), այնպես էլ արտագնացների մեծամասնությունը

¹ Կոգան Մ.Յ., Պоведенческие индикаторы этнокультурных ориентаций у горожан. - В кн. Этнические стереотипы поведения, Л., 1985, с. 37.

Նը (53.3%) հակված էր դեպի ավանդական ոհրքորշման, և ամուսնության ժամանակ պարտադիր էր ծնողների համաձայնությունը: Այն, ըստ տարիքային կազմի, ցուցաբերում է ածնան միտում: Ավագ սերնդի մեջ ամուս պահպանվող ավանդական հայացքները և կարծրատիպերը պայմանավորված էին այն հանգամանքով, որ ըստ սովորույթի՝ ոչ վաղ անցյալում ամուսնության և հարսնացուի ընտրության հարցում ընտանիքի գլխավորին է պատկանել վերջնական խոսքը: Միանգամայն այլ սկզբունքներ և դիրքորոշում ուներ 18-29 տարեկանների տարիքային խումբը, որոնք փոխադարձ սերը և համակրանքը համարում էին ամուսնության կարևորագույն գրավական: Անշուշտ, այս գործում կարևոր դեր էին կատարում նաև նրանց կրթական մակարդակը և եթիկ «տեղեկատվության» պակասը:

Աղյուսակ 47
**Ազգամիջամատամուրությունների
տարածվածությունը (%-ով)**

Բնակչության	Տարիքային կազմը	Կնոջ ազգությունը		Ընդունակությունը
		Նույն ազգի	Այլ ազգի	
18-29	Գյուղական բնակչությունը	98	2	100
	Արտագնացներ	83	17	100
30-49	Գյուղական բնակչությունը	99	1	100
	Արտագնացներ	90	10	100
50 և բարձր	Գյուղական բնակչությունը	99	1	100
	Արտագնացներ	92	8	100
Ընդամենը	Գյուղական բնակչությունը	98.7	1.3	100
	Արտագնացներ	88.3	11.7	100

Եթե ամրող գյուղական բնակչության շրջանում ազգամիջան խառնամուսնությունները կազմում էին 1.3%, ապա արտագնացների շրջանում՝ 11.7%-ը (տե՛ս աղ. 47):

Կապված տարիքային առանձնահատկությունների հետ՝ ազգամիջան խառնամուսնությունների թվաքանակը արտագնացների մոտ նվազում էր: Առանցին խմբում այն կազմել է 17%, իսկ երկրորդում՝ 10%:

Մասնագետների վկայությամբ, նման ամուսնությունները ավալի են հակված կոնֆլիկտների և հաճախ ավարտվում են ամուսնալուծությամբ¹: Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ այլազգի աղջիկները դժվարությամբ են հարմարվում տեղի մշակութային-կենցադային պայմաններին, ինչպես նաև ազգային նիստուկացին և վարքի կանոններին: Նման ամուսնությունները հետևանք են նաև պատահական և կարծատև ծանրոթությունների: Օրինակ՝ Լոռու մարզի Մեծավան գյուղում, որտեղից ամեն տարի արտագնացության էր մեկնում մոտավորապես 700-750 տղամարդ, սկսած 1960-ական թվականներից (ներառյալ՝ 1985 թվականը), գրանցվել է 48 խառնամուսնություն, որոնցից 12%-ը ավարտվել էր ամուսնալուծությամբ: Չնայած այս բոլորին՝ ընտանեկան կենցադում մեծ ինտենսիվությամբ էին տեղի ունենում այլեթնիկ մշակութային տարրերի ներթափանցման երևույթներ. «Որպես կանոն՝ ազգամիջան ընտանիքներում սինթեզվում է ամենաառաջադիմականը, որն առկա է տարբեր ժողովուրդների կենցադում: Ինտերնացիոնալիզացվում է ամրող ընտանեկան կյանքի ապրելածելը, բայց այն կրում է խառը բնույթը»²:

Նման ընտանիքների մշակութային-կենցադայային բնութագրերում տեղի են ունենում ազգային տարբեր սովորույթների ակտիվ փոխներգործություններ: Դարցումներից պարզվում է, որ այլազգի կանայք հայ ընտանեկան կենցադայ են ներմուծում իրենց ազգային մշակութի մի շարք տարրեր (բնակարանի հարդարանք, ճաշատեսակ և այլն): Ժամանակի ընթացքում նրանք ազատ կերպով տիրապետում են հայերեն խոսակցական լեզվին՝ յուղացներու հայ ազգային կենցադի մի շարք գծեր: Ի տարրերություն մոնութնիկ ընտանիքների՝ նման ընտանիքների անդամների հարաբերությունները հիմնված են «դեմոկրատական» սկզբունքների վորան: Տղամարդիկ համեմատարար քիչ են ուշադրություն դարձ-

¹ Опыт этносоциологического исследования образа жизни, М., 1980, с. 81.

² Шпилюк В.А., Межреспубликанская миграция и сближение наций в СССР, Львов, 1975, с. 151.

նում ընտանեկան կենցաղում գոյություն ունեցող աշխատանքի ավանդական բաժանման հեղինակավոր և ոչ հեղինակավոր ձևերի մասին հասարակական կարծիքին և տնտեսության մեջ օգնում են կնոջ՝ զբաղվելով երեխաների խմանքով և դաստիարակությամբ: Երեխաների շրջանում գարգանում է երկլեզվությունը. տիրապետում են ինչպես հայերենին, այնպես էլ ոուսերենին. «Ազգամիջյան ամուսնական գույգերի կրթությունը հնարավուրություն է տալիս շփվող էթնոսների միջև տեղեկատվության փոխանակմանը ինչպես սերունդների շրջանում (ամուսիններ, նրանց ընկերներ և հարազատներ), այնպես էլ սերունդների միջև (նախ և առաջ այդ ամուսնություններից ծնված երեխաները): Տեղեկատվության միջաւերնդային փոխանացումը մշակույթի վրա կարող է թողնել խոր հետք, քանի որ խառնամուսնություններից ծնված երեխաները այս կամ այն չափով յուրացնում են երկու ընտանիքների մշակութային տարրերը»¹: Այս ամենն իր ազդեցությունն էր թողնում աճող սերնդի ինտերնացիոնալ դաստիարակության վրա: Դիտարկումները ցույց են տալիս, որ ազգամիջյան խառնամուսնությունները ազդում են ընտանիքում երեխաների քանակի վրա՝ ցուցարերելով նվազման միտումներ:

Նյութական և հոգևոր մշակույթի փոխառնչություններ ու նոր տարրեր նկատվում են ոչ միայն ազգամիջյան խառնամուսնությունների վրա հիմնված ընտանիքներում, այլև մոնութենիկ կազմ ունեցող այն ընտանիքներում, որոնց գլխավորն ունի երկար տարիների արտագնացության ստաժ:

Կարելի է փաստել, որ նյութական մշակույթի մի շարք ձևերում (հագուստ, կահույք և այլն) ամուր կերպով էին այսպահանվել ազգային մի շարք առանձնահատկություններ: Անդրադարձական այդ խնդրին՝ Յու. Չարությունյանը և Լ. Դրոբիժևան նշում են, որ «անդրկովկասյան հանրապետություններում ազգային առանձնահատկությունները դրսեռը վու

են սննդի համակարգում, որը ավելի քիչ է ինտեգրվում, քան տարագում (գործնականում այն պահպանվում է միայն գյուղական պայմաններում)»²: Դրանք պայմանավորված են րնակլիմայական պայմաններով և տնտեսության գարգացման ուղղվածությամբ, ինչպես նաև ազգային ճաշակով, որոնք դարեր շարունակ ամրապնդվել են մարդկանց գիտակցության և հոգերանության մեջ:

Աղյուսակ 48
**Ուտեստի համակարգում տեղ գտած
փոփոխությունները՝ ըստ արտագնացության
տևողության (%-ով)**

Արտագնացության ստաժը (տարիներով)	Մոհույուն	Կանչքաթող	Ռուսացություն	Նյութություն	Մրգառնություն
1-3	77	1	16	6	100
3-6	79	1	17	3	100
6-10	70	2	20	8	100
10-ից ուշադիր	63	3	26	8	100
Ընդամենը	72.2	2.2	19.5	6.1	100

Ատացված նյութերի վերլուծությունից պարզվում է, որ ուտեստում, րնակարանի հարդարացնելում, հագուստում համեմատաբար կայուն կերպով պահպանվող ազգային առանձնահատկությունները արտագնացների շրջանում երկարատև շփումների հետևանքով ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Նրանց կենցաղում սեփականի հետ հանդես են գալիս նյութական մայլ մշակույթի մի շարք տարրեր: Օրինակ՝ ուտելիքի տեսականիում նկատվում էին րազմագանություն և փոխհարստացման միտումներ:

Աղյուսակ 48-ից երևում է, որ արտագնացների մեծամասնությունը (72.2%) նախապատվությունը տալիս էր ազգային, իսկ միայն 2.2%-ը՝ օտար խոհանոցին: Արտագնացների 19.5%-ը օգտագործում էր ինչպես հայկական, այնպես էլ օտար:

Դիտարկումները ցույց են տալիս, որ այն գյուղերը, որտեղից շատ են մեկնում արտա-

¹ Социально-культурный облик советских наций (По материалам этносоциологического исследования), М., 1986, с. 163.

² Арутюнян Ю.В., Дробижева Л.М., Многообразие культурной жизни народов СССР, М., 1987, с. 110.

գնացության, աչքի են ընկնում իրենց բարեկեցության մակարդակով և ընդհանուր տեսքով։ Ասվածն առավել ցայտում է, երբ մենք համեմատում ենք գանգվածային արտագնա և ոչ արտագնա գյուղերը միմյանց հետ։ Առաջիններուն մեծ մասամբ բացակայում են հիմնակառույցները և գերակշռում տուժակերտ երկարկանի տները։

Աղյուսակ 49

Արտագնաց ների տա- ռիքային կազմը	Սպառագությունների սպառագությունը					
18-29	11	26	60	-	3	100
30-49	5	27	62	5	1	100
50 և ոարձը	5	30	58	5	2	100
Ընդհանուր	7	27.7	60	3.3	2	100

Արտագնացների 60%-ը ծեռք բերված գումարների շնորհիվ կառուցել է երկարականի, իսկ 27.7%-ը՝ միահարկ տներ: Դրանք ունեն լավ հարմարություններ և առանձնանում են հետաքրքիր հարդարանքով (տե՛ս աղ. 49):

Հոգևոր մշակույթի այնպիսի դնագավառ,
ինչպիսին երաժշտությունն է, որն ունի ուժեղ
էմոցիոնալ րուսյք, արտագնացների շրջանում
դուրս է գալիս ազգային սահմաններից (տե՛ս
աղ. 50):

Գյուղական բնակչության հետ համեմատած՝ այլէթնիկ հանրույթների մշակույթի սպառումն առավել ինտենսիվորեն է ընթանում արտագնացների շրջանում: Եթե առաջինում ազգային երաժշտության ունկնդրումը կազմում է 81.7%, իսկ ոուսականը՝ 7%, ապա երկրորդը՝ համապատասխանաբար 76.7% և 11.3%: Անշուշտ, այս գործում կարևոր դեր է կատարում այն հանգամանքը, որ նրանք, այլէթնիկ միջավայրում գրկված լինելով ազգային երաժշտության ունկնդրության և դրան անմիջականորեն հաղորդականցնելու հնարա-

Վորությունից, այդ բացը լրացնում են օտար մշակութային արժեքներով։ Թե՛ գյուղական բնակչության և թե՛ արտագնացների շրջանում երաժշտության սպառումը անմիջականորեն կապված է տարիքային առանձնահատկությունների հետ։ Օրինակ, եթե երիտասարդները հատկապես գերադասում են օլուսական և արտասահմանյան էստրադային երաժշտությունը, այպա մեծահասակները՝ ժողովրդականը։

Աղյուսակ 50

Տարի-քային կազմ	Բնակչության	Երաժշտություն					
		Ալբոմ	Դրամներ	Հաշվարկագործություն	Արտադրանք	Ընդունակություն	
18-29	Գյուղական ոնակչությունը Արտագնացներ	68	12	10	10	100	
30-49	Գյուղական ոնակչությունը Արտագնացներ	86	7	4	3	100	
50 և ավագ	Գյուղական ոնակչությունը Արտագնացներ	91	2	6	1	100	
Չնդա- մենը	Գյուղական ոնակչությունը Արտագնացներ	81.7	7	6.7	4.6	100	
		Արտագնացներ	76.7	11.7	6.7	5.3	100

Հոգևոր մշակույթի բաղկացուցիչ տարրերից են նաև ազգային ավանդույթներն ու սովորույթները, որոնք տարրեր ձևերով են դրսենորվում գյուղական բնակչության և արտագնացների տարրեր տարիքային խմբերի շրջանում: Այստեղ որպես կարևոր հիմնախինդիր հանդես է գալիս ավանդականի և նորի փոխհարաբերության հարցի բացահայտումը, որի ընթացքին փորձենք հետևել հարսանեկան ծեսի քննարկման օրինակով: Ըստ ստորև ներկայացված առյուսակի՝ գյուղական րնակչության մեծամասնությունը՝ 74%, հարսանեկան ծեսերի ժամանակ նախընտրությունը տալիս էր ավանդական ձևին, որի մի շարք բաղադրամասեր պահպանվում էին նաև ժամանակակից պայմաններում: Երևու-

թի նման կենսունակությունն ունի իր այտմական խոր արմատները. հարսանեկան ծեսը հայոց մեջ ունի հազարամյակների պատմություն: Դարցումներից պարզվել է, որ արտագնացները հարսանիքը կատարում էին ազգային սովորույթների լրիվ կամ մասնակի պահպանմամբ: Գյուղական բնակչության և արտագնացների կենցաղում տարածված էին նաև հարսանեկան ծեսերի (հարսանեկան փոքր սեղան, որի ժամանակ բացակայում են ավանդականի մի շարք տարրեր), ինչպես նաև հարսանեկան ճանապարհորդության ձևերը: Դրանք գյուղական բնակչության և արտագնացների շրջանում համապատասխանաբար կազմում էին 19.7% և 4%, 21% և 7.3%: Վերոհիշյալ վիճակագրական տվյալները խոսում են այն մասին, որ նշվածները

Աղյուսակ 51

**Դարսանեկան ծեսերի նախնարության ձևերը
ամրող զուրական բնակչության և
արտաօնացների շրջանում (%-ով)**

Տարի-քային կազմը	Բնակչության	Այսուհետունություն Մասնավորապես առաջարկություն Եղիքունություն	Այսուհետունություն Վարչական պահպան բարեկարգություն				
18-29	Գյուղական բնակչությունը Արտագնացներ	70 48	22 26	7 12	1 14	100 100	
30-49	Գյուղական բնակչությունը Արտագնացներ	73 66	22 19	4 7	1 8	100 100	
50 և բարձր	Գյուղական բնակչությունը Արտագնացներ	79 72	15 18	1 3	5 7	100 100	
Ընդա- մենը	Գյուղական բնակչությունը Արտագնացներ	74 62	19.7 21	4 7.3	2.3 9.7	100 100	

դեռևս կրում էին սահմանափակ բնույթ և դանդաղորեն էին ամրապնդվում ժողովողական գանգվածների շրջանում: Խնջույքը և հարսանեկան սեղանը համեմատաբար լայն տարածում ունեին հատկապես երիտասարդների շրջանում (22% և 7%, 26% և 12%): Յար-

սանեկան ճանապարհորդության համար կարևոր պայման էին օտար միջավայրում նրանց տարիների փորձի առկայությունը և մեծ քաղաքների նկատմամբ դրական դիրքորոշումները:

Հարցման արդյունքներով, եթե արտագնա
աշխատանքի վայրում ազգային տոները
նրանք նշել են արտազնա խմբի անդամնե-
րով, ապա խորհրդային տոները՝ տեղի բնակ-
չության հետ: Օրինակ՝ ազգային տոներից
նրանց շրջանում շատ տարածված էի Տյառ-
նընդառածը, Վարդավառը, Զատիկը, Սուրբ
Խաչը, իսկ խորհրդայինից՝ փետրվարի 23-ը,
Մայիսի 1-ը, Հաղթանակի օրը, Նոյեմբերի 7-ը:

Եթոսոցիոլոգիական նյութերի վերլուծությունից պարզվում է, որ արտագնա աշխատանքից վերադառնալուց հետո՝ մինչև հաջորդ սեզոնի սկիզբը, արտագնացները տարբեր ձևերով էին անցկացնում իրենց ազատ ժամանակը: Ըստ աղյուսակ 52-ում բերված վիճակագրական տվյալների՝ ազատ ժամանակի օգտագործումն ունի հետևյալ պատկերը:

- 1) 33.7%-ը զբաղվել է թղթախաղով, դոմինո, նարդի, շախմատ և այլ խաղերով,
 - 2) 33.6%-ը ոհտել է հեռուստացույց, ունկնդրել ռադիո,
 - 3) 14.7%-ը հաճախել է կինոթատրոն,
 - 4) 13.3%-ը թերթ է կարդացել,
 - 5) 4.7%-ը հաճախել է համերգ, թատրոն:

Որոշակի կապ էի նկատվում ազատ ժամանակի օգտագործման և արտազնացի տարիքային կազմի, ինչպես նաև կրթական մակարդակի միջև։ Օրինակ՝ սոցիալական այս գործոններով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ 50 և դաշտը տարիքային խմբում ամենօրյա թերթերի ընթերցանությունը ցածր տոկոս է կազմում։

Նրանք ավելի շատ հետաքրքրվում էին ներընտանեկան կյանքով և ազատ ժամանակը օգտագործում կենցաղային հարցեր լուծելու համար. բնակարանի վերանորոգում, տնտեսության մեջ դրանքի մյուս անդամներին օգնություն: Տարիքային այս խմբում մեծ տարածում են վայելում նաև հեռուստացույցն ու ռադիոն (37%): Այս հարցում

համարյա նույն միտումներն են նկատվում 30-49 տարեկան արտագնացների շրջանում: 18-29 տարեկան արտագնացները հիմնականուս ունեն հետաքրքրությունների լայն շրջանակ: Մյուս տարիքային խմբերի հետ համեմատած՝ նրանց մոտ բարձր տոկոս էր կազմում կիմո հաճախվելը (26%):

Աղյուսակ 52

Աշտական բնակավայրում ազատ ժամանակի անցկացման ծևերը (%-ով)

Արտագնացների տարիքային կազմը	Թերթիկ կարողականություն	Հաճախել կամ դրա քառորդ շաբաթում	Հաճախել կամ դրա քառորդ շաբաթում համապատասխան համարը	Հարցական դրա քառորդ շաբաթում համապատասխան համարը	Հետառշաբաթագույն դրա քառորդ շաբաթում	Ընդամենը
18-29	18	26	7	19	30	100
30-49	14	15	4	33	34	100
50 և բարձր	8	3	3	49	37	100
Ընդամենը	13.3	14.7	4.7	33.7	33.6	100

Արտագնացությունը նպաստում էր նաև արտագնա խմբի անդամների միջև կապերի ամրապնդմանը, և նրանց մեծ մասը իրենց ազատ ժամանակը գերադասում էր անցկացնել միասին: Ըստ աղյուսակ 53-ի՝ արտագնացների մեծամասնությունը՝ 57%-ը, իյուր գնալու նախապատվությունը տվել է աշխատանքային ընկերներին, որոնց միջև գոյություն ունեն նաև ազգակցական և դրացիական կապեր: Աշխատանքային ընկերների միջև այդ կապը ամուր էր հատկապես այն արտագնացների շրջանում, որոնք երկար տարիներ միմյանց հետ մեկնել էին արտագնա աշխատանքի: Օրինակ՝ 10-ից բարձր տարիների արտագնացության ստաժ ունեցողների մոտ այն կազմում է 62%:

Արտագնացությունը վերջին հաշվով նպատակ էր հետապնդում բավարարելու և ընդլայնելու ընտանիքի նյութական հնարավորությունները, որը, ըստ նրանց, կարող էր նպաստել կայուն ընտանիք ունենալուն: Դարցաթերթիկում գետեղված՝ «Զեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լավ ապրել, կամ ի՞նչ է անհրա-

ժեշտ, որ Զեր երջանիկ գգաք» հարցերի վերաբերյալ ստացված վրձակագրական տվյալներից կարելի է եգրակացնել, որ արտագնացների արժեքային կողմնորոշման համակարգում առաջին տեղը գրավել է «լավ ընտանիք ունենալու» հանգամանքը՝ 41.7% (տե՛ս աղ. 54):

Աղյուսակ 53

Դյուր գնալու նախապատվությունը (%-ով)

Արտագնացության ստաժը (տարիներով)	Այցելություն				Ընդդիմություն
	Բարեկարգ ամեներին	Դարսաններին	Աշխատանքային ընկերներին	Եղանակաված պատուին	
1-3	17	24	57	2	100
3-6	20	23	56	1	100
6-10	19	16	51	4	100
10-ից բարձր	15	20	62	3	100
Ընդամենը	18	22	57	3	100

Դամեմատական կարգով նշենք, որ այս արժեքի ընտրությանը նախապատվություն են տվել նաև մի շարք երնուներ՝ Էստոնացիները, ռուսները, ուգրեկները, մոլդովացիները¹: Այստեղ կարևոր դեր են կատարում գոյություն ունեցող պատմական կայուն ավանդույթները, որոնք դրսենուիլ են ժողովրդի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններում, վարքում, մշակութային-կենցաղային բնագավառում, բարեկամական հարաբերություններում²: Այդուհանդերձ, արտագնացության ազդեցությունը հատկապես մեծ էր ընտանիքի վրա: Ինչպես նշվել է վերևում, ընտանիքից արտագնացի երկարատև բացակայությունը առաջ էր բերում հոգեբանական և բարոյական մի շարք լուրջ հիմնախնդիրներ, ամենից առաջ իւթարում ներընտանեկան կյանքի կանոնավոր ռիթմը:

Աղյուսակ 55-ից ակնհայտ է, որ արտագնացների 34%-ի գնահատմամբ, այն բացա-

¹ Социально-культурный облик советских наций (По материалам этносоциологического исследования), М., 1986, с. 251.

² Арутюнян Ю.В., Национальные особенности социального развития, СИ, №3, 1985, с. 30.

սաբար է անդրադառնում ընտանիքի և նրա անդամների միջև գոյություն ունեցող հարաբերությունների վեհ՝ հանգեցնելով հոգեկան կապերի թուլացման, սիրո, փոխըմրոնման բացակայության:

Արտագնացմների արժեքային կողմնորոշումը՝ ըստ տարիքային կազմի (%-ով)

| Տարիքային
կազմը |
|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|
| 18-29 | 45 | 5 | 2 | 25 | 7 | 16 | - | 100 |
| 30-49 | 37 | 15 | 3 | 10 | 11 | 21 | 3 | 100 |
| 50 և բարձր | 43 | 5 | 5 | 13 | 7 | 26 | 1 | 100 |
| Ընդամենը | 41.7 | 8.3 | 3.3 | 16 | 8.4 | 21 | 1.3 | 100 |

Արտագնացմների վրա արտագնացության ազդեցության գնահատումը (%-ով)

Տարիքային կազմը	Տարիքային կազմը	Տարիքային կազմը	Տարիքային կազմը	Տարիքային կազմը	Տարիքային կազմը
18-29	32	38	28	2	100
30-49	23	45	30	2	100
50 և բարձր	41	19	36	3	100
Ընդամենը	32	34	31.3	2.3	100

Բախսվելով այդ երևույթի հետ՝ արտագնացների ընտանիքի անդամները հաճախ տալիս երն հետևյալ պատասխանները. «Հավանություն չեմ տալիս արտագնացությանը, քանի որ այն ինչպես երիտասարդ ընտանիքների, այնպես էլ երեխաների դաստիարակության գործում հանգեցնում է մի շարք րացասական հետևանքների», «Երևույթն ունի վատ կողմեր: Տեղում աշխատանքի րացակայության և ցածր աշխատավարձի պատճառով

ստիպված երկար ժամանակ կտրվում ենք ընտանիքից, որը շատ ղեպեղում բացասար է անդրադառնում»: Արտագնացի երկարատև բացակայության ընթացքում ընտանիքի ամբողջ հոգսը մի կողմից ընկնում էր կնոջ ուսերին, մյուս կողմից նրան հուզում էրն նաև ամուսնու ճակատագիրն ու առողջական վոճակը: Այնուհեանդերձ, կանայք, ընդհանուր առմամբ, դրական են գնահատել ստեղծված ներընտանեկան հարաբերությունները: Այն ամենից առաջ պայմանավորված էր ընտանիքի հիմնական կերակրողի՝ տան գլխավորի նկատմամբ ունեցած կայուն դիրքորոշմամբ, ընտանիքի անդամների միջև գոյություն ունեցող աշխատանքի ավանդական ծերի բաժանմամբ, ինչպես նաև հասարակական կարծիքով:

Այդուհանդերձ, արտագնացությունը դառնում էր լուրջ գործոն ընտանիքի հիմքերի անրության քայլայման առումով, որի հետևանքով գյուղական բնակչության շրջանում հետզհետեւ աճում էր ամուսնալուծությունների, անկայուն և լքված ընտանիքների թիվը: Որպես փաստ՝ 1984թ. Երևանի և Գյումրիի տարրեր շրջաններից, իսկ 1984-86թթ. Տաշիրի և Գավառի ժողդատարաններից վերցված ապահարզանների գործերից պարզ է դառնում, որ ամուսնալուծությունների որոշ մասը առնչվում է սեզոնային արտագնացությանը: Այս իրադրությունում ամուսնալուծության համար հանդես է զալիս երկու կարևոր պատճառ. առաջին՝ «ամուսինը» «այնտեղ» (խոպանում) նոր ընտանիք է կազմել, ուգում է բաժանվել, որ ձևակերպի նոր ամուսնությունը, երկրորդ՝ «կինը (օռւս) չի համակերպվել տեղի պայմաններին, վերադարձել է հաջագատ վայրեր»: Նման գործերը Երևանում կազմում էին 1.5%, Գյումրիում՝ 18.8%, Գավառում՝ 8.5%:

Ամուսնալուծությունը բնութագրական էր համարյա րոլոր տարիքային իմրերի համար: Օրինակ՝ 18-29 տարեկան այն արտագնացների տևական բացակայությունը, որոնք մեկնել էին ընտանիքի կազմավորման ընթացքում, ինչպես նաև ամուսիններով միմյանց ընտելանալու և հոգեբանական դժվարու-

թյունները ուաղքահարելու, Երեխսա ունենալու շրջանում, հաճախ հանգեցնում էր ընտանեկան անախորժությունների առաջացման և անուսնալուժությունների:

Այժին և ավագ տարիքի արտազնացները Երեխսաների չափահաս դառնալուց հետո դիմել են ապահարզանի, որի պահանջը հասունացել էր արտագնա աշխատանքի վայրում նոր ամուսնությունը գրանցելու համար: Դաճախ դիտարկվում էր նաև ապակողմնորոշված վարչագիծ, րարուական չափանիշներից շեղում: Նրանց վարած Երկակի կյանքը հաճախ հանգեցնում էր Երկու ընտանիքի ծնավորման: Օրինականը՝ տեղում, ոչ օրինականը՝ արտագնա աշխատանքի վայրում: Սա առանձնապես հատուկ էր նրանց, որոնք Երկար տարիներ չեին փոխում արտազնացության վայրը:

Վերը նշվածն ընդհանուր գծերով արտացոլվել է նաև կատակերգերում.

*Առ կալոշիս թայը, պախս քեզի հիշատակ,
Գարուն եկավ, խոպանա կերթամ,
Կարողա ի գամ, կարողա չի գամ,
Եղսո ջամ:*

*Գացի խոպան՝ մեկ խատ էր,
Եկա տեսա՝ երկու խատ էր,
Ես իմ ես արել, փափախ ես արել,
Փափախ ես արել, Եղսո ջամ:
Երբ որ ծեր ջոշնան,
Կարողա ընծի չճանչնան,
Կալոշիս թայը ցրոյց կտաս,
Նրանք իմ ծի կծանչնան:*

Գեղարքունիքի ազգագրական մարզում տարածված այս կատակերգը յուրօրինակ Երկխոսություն է ամուսնու և կնոջ միջև, որը նկարագրում է նման ընտանիքների սոցիալ-րարոյական կերպարը:

Նյութերի վերլուծությունից պարզվել է, որ այն բացասարար է անդրադառնում Երեխսաների դաստիարակության վրա: Ինչպես հայտնի է, Երեխսայի սոցիալականացումը ծնողներից պահանջում է հսկայական ֆիզիկական և րարոյական ուժեր: ճիշտ է, դրան նպաստում էին նաև զյուղական բնակչության շրջանում դեռևս պահպանվող դաստիարակության ավանդական համակարգը և ազգակիցների աջակ-

ցությունը, րայց ընտանիքից արտագնացի բացակայությունը, ինչպես նաև մոր համար ազատ ժամանակի պակասը իր հետքն էր թողնում Երեխսաների դաստիարակության ճիշտ կազմակերպման խնդրում: Սա հաճախ հանգեցնում էր նրան, որ Երեխսաները դուրս էին մնում ծնողների անմիջական հսկողությունից և ճիշտ չեին կարողանում դասավորել իրենց կյանքի հետագա ընթացքը:

Արտագնացների 45,7%-ի կարծիքով, այն բացասարար էր ազդում Երեխսաների դաստիարակության վրա՝ փոխելով նրանց արժեքային կողմնորոշումը (տե՛ս աղ. 56): Տարբեր շրջանների դպրոցների տնօրենների հետ անցկացված հարցումներից պարզվում է, որ բարձր դասարանցիների որոշ մասը հաճախ լրել է դասերը և հարազատների կամ ծնողների հետ մեկնել արտագնացության, իսկ նրանց որոշ մասն էլ դպրոցն ավարտելուց հետո ընդհանրապես րոնել է արտագնացության ճանապարհը: Երեխսաների խաթարված դաստիարակությանն է վերաբերում Ծիրակի ազգագրական մարզում գրի առնված հետևյալ կատակերգը.

*Որոշեցինք գնալ խոպան
Ես այստեղ, կիմս՝ այստեղ,
Երեխսաները մնացիմ մեջտեղ,
Ոչ բարով գնացինք խոպան...*

Արտագնացությունը լուրջ հետևանքներ է թողնում զյուղական բնակչության ընդհանուր ժողովրդագրական գործընթացների վոա: Այն որոշակի փոփոխություններ է առաջացնում բնակչության թվաքանակում՝ հատկապես աշխատունակ հասակի տղամարդկանց շրջանում և հանգեցնում սեռատարիքային կազմի համամասնության խախտման: Օրինակ՝ տարվա որոշակի շրջանում հազարավոր արտագնացների բացակայության հետևանքով մեծ խզում է առաջանում տղամարդկանց և կանանց քանակական հարաբերակցության միջև: Սրան հավելենք նաև այն, որ մշտական մեկնողների պատճառով գյուղական բնակչակայրերում առաջանում էր կանանց թվաքանակի գերակշռություն: Նրանք, նախկինի հետ համեմատած, ընտրում էին այնպիսի բնակչակայրեր, որոնք առանձնանում էին առավել

բարեկեցիկ կյանքի պայմաններով: Օրինակ՝ ըստ Գեղարքունիքի մարզի Արդուխան գյուղի գյուղապետի տվյալների՝ 1979-85թ. արտագնա աշխատանքի վայրում մշտական րնակության է մեկնել 52 մարդ, իսկ Շիրակի մարզի Փանիկ գյուղից՝ 91 մարդ (տե՛ս աղ. 57): Եթե առաջինները հիմնականում մշտական բնակություն են հաստատել Սարատովի մարզում, Վոլգոգրադում, Ցելինոգրադում և այլն, ապա մյուսները՝ Իրկուտսկում, Խաբարովսկում, Նովոսիբիրսկում, Օմսկում և այլուր: 1980-ական թթ. Դայաստանից մեծ հոսք է նկատվել հատկապես Կրասնոդարի և Ալտավրովովի երկրամասեր, ինչպես նաև Ռոստովի շրջան, որտեղ, բացի շինարարությունից, զբաղվում էին նաև գյուղատնտեսական աշխատանքներով: Դիտարկումները ցույց են տալիս, որ մշտական միգրացիան տեղի է ունենում ազգակցական խմբերով, որոնք օտար միջավայրում ապրում են համախմբված ձևով:

Օրինակ՝ 1960-ական թվականներից սկսած, Շիրակի մարզի Փանիկ գյուղից դեպի Կամչատկա է մեկնել և մշտական բնակություն հաստատել ճառվշյանների 10-12 ընտանիք: Ականատեսների վկայությամբ, այդ ընտանիքները ապրել են կողք կողք՝ ստեղծելով փոքրիկ հայկական թաղամաս:

Այլուսակ 56 Արտագնացության ազդեցությունը երեխաների դաստիարակության հարցում (%-ով)

Արտագնացների տարիքային կազմը	Ն ժամանակաշրջան	Ն մասնակիությունը	Դիտարկում	Միգրացիայի դիրքությունը	Ընդունություն
18-29	29	49	21	1	100
30-49	35	41	23	1	100
50 և ոարձու	35	47	17	1	100
Ընդամենը	33	45.7	20.3	1	100

Տեղում համապատասխան աշխատանքի բացակայությունը, ցածր աշխատավարձը, ինչպես նաև անբավարարվածությունը տեղի մշակության-կենցաղային պայմաններից արտագնացների շրջանում առաջացնում է դրական դիրքորոշում այլ բնակավայրերում մշտական բնակություն հաստատելու համար: Ըստ

հարցման արդյունքների՝ մոտակա երկու տարվա ընթացքում տեղափոխվելու ցանկություն էր հայտնել նրանց 7%-ը:

Այլուսակ 57 Անվերադարձ միգրացիայի հեռանկարները՝ ըստ արտագնացության տևողության (%-ով)

Արտագնացության տարիքները	Առ	ՀՆ	Նորոգությունը	Ընդունություն
1-3	7	91	2	100
3-6	8	92	-	100
6-10	7	92	1	100
10-ից ոարձու	6	93	1	100
Ընդամենը	7	92	1	100

Արտագնացության գործընթացը հանրապետության բնակչության հաշվեկշռում առաջ է բերում բացասական մնացորդ, ստեղծում իրական նախապայմաններ նրա մեխանիկական հոսքի ձևակորման համար: Աստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ արտագնացության գործում վիճակագրական հաշվառման թերությունների պատճառով հաճախ նրանց գգալի մասը դասվել է անվերադարձ միգրանտների կատեգորիային: Օրինակ՝ Գավառի և Արթիկի տարածաշրջաններում 1985թ. 156 արտագնացների 68%-ը, առանց հաջորդող գրանցման և միգրացիայի թերթիկի լրացման, ժամանակավոր գրանցվել է արտագնա աշխատանքի վայրում:

Արտագնացությունը անբավարար ազդեցություն է թողնում արտագնացի առողջական վիճակի վոր: Արտագնացների կողմից անընդհատ փոփոխվող աշխարհագրական տարածքները և, բնականաբար, տարբեր բնակչիմայական պայմանների առկայությունը բացասաբար են անդրադառնում օրգանիզմի հարմարվողականության վոր, որը կենսաբանական առումով հետագայում թողնում է լուրջ հետևանքներ. Նրանց օրգանիզմը ծեռք է բերում սեգմոնային ոիթմայնություն՝ տարվա որոշակի շրջանում հարմարվելով ինտենսիվ և ծանրաբեռնված աշխատանքին, մլուս սեգմոնին՝ օրգանիզմի լարվածության թուլաց-

մանը և հանգստին: Մասնագետների գնահատմամբ «... հարցվողների միայն 5%-ն է, որ աշխատանքից հետո հոգնածությունը չի գգացել. 18%-ը քիչ է հոգնել, մեծ մասը իր հոգնածությունը գնահատել է շատ բարձր (54%) կամ սահմանային (23%) և նույնիսկ ընթրել չի ցանկացել»¹:

Բացի արտահայտված գերհոգնածությունից, բժիշկների վկայությամբ, 6 արտագնացներից 1-ը տառապում է պարանոցի, ստամոքսի ցավերով, հոդացավերով: Տարածված են նաև այլ հիվանդություններ, որոնք հաճախ ճակատագրական են դառնում ընտանիքի համար: Արտագնացների առողջական վիճակի վատթարացմանը նպաստել է նաև արտագնա աշխատանքի վայրում բնակարանային և կանոնավոր կենցաղային պայմանների բացակայությունը. ապրում էին վագոններում, իին շենքերում, խարխուլ բնակարաններում: Ենիշտ է, արտագնացները այս հաճամանքին առաջնակարգ նշանակություն չէին տալիս, սակայն այն գերծանրարեննված աշխատանքից հետո մեծ նշանակություն ունի ուժեղ վերականգնման համար:

Անշուշտ, վերը քննարկվածը կարող է բացասաբր ագդել արտագնացի կյանքի միջին տևողության վեա: Անվտանգության բացակայության, դրա կանոնների կողմիտ խախտման հետևանքով արտագնացները հաճախ են ենթարկվել արտադրական վնասվածքների. նրանք աշխատանքի րարձր տեմպեր ապահովելու համար հաճախ «ռիսկի» են դիմում և անտեսում անվտանգության տարրական կանոնները՝ ստանալով ծանր կոտրվածքներ, երրեմն արծանագրվել են նաև մահացության դեպքեր: «Արտագնացությունը,- նշում են նրանց

հարագատները,- մեզ ծանոթացրեց ցինկից դագաղի հետ»: Օրինակ՝ 1960թ. մինչև 1986թ. Տաշիրի շրջանի Անձավան գյուղից դժբախտ պատահարների հետևանքով մահացել է 43 մարդ, իսկ Գավառի շրջանի Սարուխան գյուղից՝ 24 մարդ: Ասհացածների տարիքը չի գերազանցել 30-ը:

Արտագնացներին հուգում էր նաև նրանց աշխատանքային ստաժի հարցը: Խորհրդային աշխատանքային օրենսդրությամբ երկարատև անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցողների համար նախատեսվում էին մի շարք սոցիալական արտոնություններ և առավելություններ: Նրանք, բնականաբար, չէին կարող օգտվել դրանից, քանի որ արտագնացության պատճառով աշխատանքային ստաժը ընդհատվում էր²: Այս վիճակից դուրս գալու համար որոշ մասը հաճախ դիմում էր տարբեր միջոցների և անընդմեջ աշխատանքային ստաժը պահպանելու համար «համաձայնության» էր գալիս ծեռնարկության դեկավարների հետ:

Այսայսուվ, ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ արտագնացության երնսուցիալ գծերի ձևավորումը պայմանավորված էր այլեթնիկ միջավայրում նրանց աշխատանքային գործունեության և տեղի բնակչության հետ ակտիվ և երկարաժամկետ միջանձային շփումներով: Դրանք որոշակի ազդեցություն էին թողնում արտագնացի վոա՝ գավակի փոփոխություններ առաջացնելով կենցաղա-մշակութային հարաբերությունների ոլորտում: Արտագնացությունը հանգեցնում էր սոցիալ-ժողովրդագրական լուրջ հետևանքների, վերածվում ընտանիքի ամրությանը սպառնացող վտանգի:

¹ Шабанова М.А., указ. соч., с. 51.

² Там же, с. 52.